

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY

ԱՐԱԲԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

JOURNAL
OF
ARABIC STUDIES

№ 10

ISSN 1829-4510

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
YEREVAN YSU PRESS

2018

*Հրատարակվում է ԵՊՀ արևելագիտության
ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

*Published by the decision of the scientific council of
the Oriental Studies Department, Yerevan State University*

Խմբագրական խորհուրդ

Editorial Board

Դավիթ Հովհաննիսյան – բ.գ.թ.,
պրոֆեսոր (նախագահ)
Մարգարիտա Խաչիկյան
բ.գ.դ., պրոֆեսոր
Ռուբեն Կարապետյան
պ.գ.դ., պրոֆեսոր
Արշակ Փոլադյան
պ.գ.դ., պրոֆեսոր
Գուրամ Չիկովանի
բ.գ.դ., պրոֆեսոր (Վրաստան)
Սամվել Կարաբեկյան
բ.գ.թ., դոցենտ
Մուշեղ Ասատրյան
PhD (Կանադա)
Սոնա Տոնիկյան
բ.գ.թ., դոցենտ
Մարատ Յավրումյան
բ.գ.թ., դոցենտ
Հայկ Քոչարյան
պ.գ.թ., դոցենտ
Արայիկ Հարությունյան
պ.գ.թ.

Prof. David Hovhannisyan
(editor in chief)
Prof. Margarita Khachkyan
Prof. Ruben Karapetyan
Prof. Arshak Poladyan
Prof. Guram Chikovani
(Georgia)
Dr. Samvel Karabekyan
Mushegh Asatryan, PhD
(Canada)
Dr. Sona Tonikyan
Dr. Marat Yavrumyan
Dr. Hayk Kocharyan
Dr. Arayik Harutyunyan

© Երևանի պետական համալսարան, 2018

© Yerevan State University, 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վարդան Ղափլանյան

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԻՍԼԱՄԱԴԱՎԱՆ ԱԲԽԱԶԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1992
-1993 ԹԹ. ՎՐԱՅ-ԱԲԽԱԶԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....9-22

Գայանե Մկրտումյան

ԵԳԻՊՏՈՍԻ ԵՎԱՃՈՒՄԸ ՕՄԱՐ ԻԲՆ ԱԼ-ԽԱՏՏԱԲ (634-644)
ԽԱԼԻՖԱՅԻ ՕՐՈՔ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵՎ ՍՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....23-32

Արամայիս Գրիգորյան, Վարդան Ղափլանյան

ԹՈՒՐՔԻԱՅԻ «ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՈՒԹՅԱՆ» ԴՈԿՏՐԻՆԻ
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ
ԿՈՎԿԱՍՈՒՄ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....33-46

Արշակ Գևորգյան

1950-1960 ԹԹ. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԻՇԽՈՂ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵՔԹԱՇԻ ՍՈՒՖԻԱԿԱՆ
ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ.....47-60

Աբու Ջաիդ Ալի Մուսա

«ՊԱՂԵՍԻՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԶՍԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ»
(«ՖԱԹՀ») ՍՏԵՂԾՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ.....61-75

Լուսինե Մկրտչյան

ԻՍՐԱՅԵԼԻ «ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ.....76-85

Գազիկ Համբարյան

ԿԱՏԱՐՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԱՄՆ-Ի

ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՇԱՀԵՐԸ..... 86-95

Դավիթ Հովհաննիսյան, Արու Զաիր Այի Մուսա

ԻՍՐԱՅԵԼԱԲՆԱԿ ՊԱՂԵՍՏԻՆՅԻ ԱՐԱԲ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ

ՊԱՌԱԿՏՄԱՆ ԵՎ ԴՐԱ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ..... 96-113

Վահե Աղասարյան

ԹՈՒՐԹԻՍՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ

ԵՎ ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ..... 114-120

ԻՍԼԱՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աննա Գևորգյան

ՄԵԿ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ՏԱՐԲԵՐ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐ.

ԱԼԻ ԽԱՄԵՆԵԻԻ ԵՎ ՀԱՄԱՆ ՌՈՒՀԱՆԻԻ ՈՐՈՇ

ՏԱՐԱՋԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ..... 121-134

Շուշան Կյուրեղյան

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՆԵՐՆ ԸՍՏ ԻՔՆ ԱԼ-ՋԱՌԻՉԻ

«ԹԱԼԲԻՍ ԻԲԼԻՍ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ..... 135-162

Տաթևիկ Մկրտչյան

ՆԱԿՆՆԱԼ-ԲԱԼՆԱԳ-Ի ՈՒՂԵՐՁ-ՆԱՄԱԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ..... 163-176

Լևոն Պետրոսյան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՉԿԻԹՆԵՐԸ

(ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)..... 177-200

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Հովհաննիսյան

«ԱՐԱԲԸ» ՈՐՊԵՍ ԻՆՖՈՐՄԱՅԻՈՆ ՀՈՍՔԵՐԻ

ԱՂԱՊՏԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ..... 201-213

Լուսինե Տեր-Հովհաննիսյան

ԲԱՆՏԱՅԻՆ ԵՐԿԻ ԺԱՆՐՆ ՄԵՐՉԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. «ՀԱՐՄԻԵ».....214-222

Ամայյա Գրիգորյան

ԵՐԳ ԵՐԳՈՑԻ ԵՐԲԱՅԱԿԱՆ ԲՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....223-234

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հասմիկ Երիցյան

ԱՐԱԲԵՐԵՆԻ ՃԳՆԱԺԱՍԸ

ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....235-255

Զարուհի Խաչատրյան

ԱՐԱԲԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՈՐՈՇ ՁԻԱՆՈՒՆՆԵՐ ԸՍՏ

ՊԱՐՄԿԵՐԵՆ «DO FARASNĀME. MANSUR O MANZUM»

ՁԻԱՄԱՏՅԱՆԻ.....256-270

Մերվաթ Գոմասա Արդուլլահ Օսման

ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՐԱԲԵՐԵՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՀՈՒՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....271-283

CONTENT

HISTORY

Vardan Ghaplanyan

THE FORMATION AND ACTIVITY OF THE MUSLIM ABKHAZIAN
COMMUNITY OF TURKEY DURING 1992-1993 GEORGIAN-
ABKHAZIAN WAR.....9-22

G.ayane Mkrtumyan

THE CONQUEST OF EGYPT DURING THE REIGN OF KHALIFA
OMAR IBN AL-KHATTAB IN CHRISTIAN AND MUSLIM
HISTORIOGRAPHY (634-644).....23-32

Aramayis Grigoryan, Vardan Ghaplanyan

THE IMPLEMENTATION OF TURKEY'S "STRATEGIC DEPTH"
DOCTRINE IN THE CONTEXT OF CONFLICT RESOLUTION
IN THE MIDDLE EAST AND SOUTH CAUCASUS.....33-46

Arshak Gevorgyan

REFLECTIONS AROUND THE INTERRELATIONS BETWEEN
THE TURKEY'S RULING (1950-1960) DEMOCRATIC PARTY
AND THE BEKTASHI SUFI ORDER.....47-60

Abu Zayd Ali Musa

THE FORMATION AND DEVELOPMENT OF "PALESTINIAN
NATIONAL LIBERAL MOVEMENT" (FATAH).....61-75

Lusine Mkrtchyan

LEGAL ASPECTS OF THE LAW OF RETURN.....76-85

Gagik Hambaryan

QATAR CRISIS AND MIDDLE EAST
INTERESTS OF THE USA.....86-95

Davit Hovhannisyan, Abu Zayd Ali Musa

ISRAELI PALESTINIAN ARAB POLITICAL LEADERS'
POSITION ON PALESTINIAN SPLIT AND IT'S REASONS.....96-113

Vahe Aghasaryan

THE POLITICS OF TURKEY IN SYRIA AND
THE KURDISH FACTOR.....114-120

ISLAMIC STUDIES

Anna Gevorgyan

ONE REVOLUTION, DIFFERENT REVOLUTIONARIES: SOME
TENSIONS BETWEEN THE PRESIDENT
ROUHANI AND AYATOLLAH KHAMENEI.....121-134

Shoushan Kyureghyan

THE INNOVATION AND THE INNOVATORS ACCORDING
TO 'IBN AL-JAWZĪ'S "TALBĪS IBLĪS".....135-162

Tatevik Mkrtchyan

DISCUSSION OF SOME STRUCTURAL AND CONTEXTUAL
PECULIARITIES OF 'ALI IBN ABĪ TĀLIB'S LETTERS
IN NAHĠ AL-BALĀĠA.....163-176

Levon Petrosyan

THE MOSQUES OF YEREVAN (HISTORICAL APPROACH).....177-200

LITIRATURE

Davit Hovhannisyan

"ADAB" AS THE ADAPTATION INSTRUMENT FOR
THE INFORMATION FLOW.....201-213

Lusine Ter-Hovhannisyan

THE "HABSIYAT" GENRE IN
PERSIAN LITERATURE.....214-222

Amalya Grigoryan

THE HEBREW TEXT AND THE ARMENIAN

TRANSLATIONS OF THE SONG OF SONGS223-234

LINGUISTICS

Hasmik Yeritsyan

CRISIS OF ARABIC LANGUAGE IN

THE UNITED ARAB EMIRATES235-255

Zaruhi Khachatryan

SOME ARABIC ORIGIN HORSE APPELLATIONS

ACCORDING TO PERSIAN LANGUAGE HORSE BOOK

«DO FARASNĀME. MANSUR O MANZUM»256-270

Mervat Gomaa Abdullah Osman

THE GREEK LOANWORDS MUTUAL IN

ARABIC AND ARMENIAN271-283

**ԻՍՐԱՅԵԼԻ «ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ԱՍՊԵԿՏՆԵՐԸ**

Լուսինե Մկրտչյան
lusinemkrtchyan92@gmail.com

*Բանալի բառեր՝ Հոլոքոստ, Վերադարձի մասին օրենք, Իսրայել,
հայրենադարձություն*

Վերապրելով Հոլոքոստը՝ հրեաներին ի վերջո հաջողվեց 1948թ. հիմնադրել Իսրայել պետությունը: Այդուհանդերձ, պետականության կայացմանը զուգահեռ ավելի ու ավելի էր ակնբախ դառնում հայրենադարձությանը զանգվածային բնույթ հաղորդելու անհրաժեշտությունը՝ հատկապես հաշվի առնելով մշտական պատերազմի սպառնալիքը, որը բխում էր հարևան արաբական երկրներից:

Դեպի Իսրայել պետություն հայրենադարձությունը խթանելու համար 1950թ. հուլիսի 5-ին Իսրայելի խորհրդարանում՝ Կնեսետում, միաձայն ընդունվեց «Վերադարձի մասին» օրենքը¹ (եբր. **חוק תשובה**), որը յուրաքանչյուր հրեայի իրավունք էր վերապահում վերադառնալ Իսրայել պետություն:

Այս օրենքը, ըստ էության, սիոնիզմի գաղափարախոսության օրինական դրսևորումն էր, այն է՝ հրեա ժողովրդի միավորումը և վերածնունդն իր պատմական հայրենիքում՝ Էրեց Իսրայելում²:

1952 թ. ընդունվեց մի նոր՝ «Քաղաքացիության մասին» օրենքը, որը նախատեսում էր քաղաքացիության կարգավիճակի ավտոմատ ձեռքբերում «Վերադարձի մասին» օրենքի հիման վրա երկիր եկող յուրաքանչյուր հրեայի համար:

¹ The Law of Return 5710 (1950) <https://knesset.gov.il/laws/special/eng/return.htm>

² <https://eleven.co.il/zionism/general-information/13819/>

Հայրենադարձությանը տեսականորեն նպաստող այս օրենքներն ընդունման իսկ պահից առաջ բերեցին իրավական խնդիրների մի ամբողջ շարք: Որպես առավել վիճահարույց կարելի է առանձնացնել, թերևս, հրեականության իրավական սահմանման հարցը: Ի վերջո, ու՞մ կարելի է վերագրել «Վերադարձի մասին» օրենքի առաջին կետում ³ նշվող «յուրաքանչյուր հրեա» արտահայտությունը: Արդյո՞ք այն նույնացվում է հրեա տերմինի հալկական սահմանմանը ⁴, թե՞ հրեա է համարվում յուրաքանչյուրն, ով հռչակում է իր պատկանելիությունը հրեա ազգին:

Թեև օրենքի ընդունման պահին «հրեա» բառն արդեն իսկ հանդիպում էր Իսրայելի բազմաթիվ օրենքներում, այդուհանդերձ Կնեսետը որևէ հստակեցում չէր արել այս հարցում, ինչն անորոշության և տարամեկնաբանման տեղիք էր տալիս: Ակնհայտ է, որ տերմինի բացատրության հարցում հստակ մեկնաբանության բացակայությամբ Կնեսետը փորձում էր խուսափել անցանկալի հասարակական և քաղաքական հետևանքներից:

«Վերադարձի մասին» օրենքի ընդունման պահից ի վեր այս հարցը դարձավ բազմաթիվ վեճերի, ընդհուպ մինչև քաղաքական ճգնաժամի պատճառ:

Կրոնական ուղղվածություն ունեցող կուսակցությունները պահանջում էին հստակեցնել օրենքը և որպես հիմք ընդունել Հալակայում հրեականությանը տրվող բնորոշումը: Այն է. «Հրեա է նա, ով ծնվել է հրեա մորից կամ ընդունել է հուդայականություն»:

³ The Law of Return 5710 (1950) <https://knesset.gov.il/laws/special/eng/return.htm>

⁴ Հալակա - հուդայականության նորմատիվ հատվածը (ի տարբերություն Ազադայի), որը կարգավորում է հրեաների կրոնական, ընտանեկան եւ քաղաքացիական կյանքը: Ավելի նեղ իմաստով, Թորայում, Թալմուդում եւ ավելի ուշ շրջանի ռաբիական գրականության մեջ պարունակվող օրենքների շարք, ինչպես նաև այդ օրենքներից յուրաքանչյուրն առանձին: <https://eleven.co.il/judaism/religious-law/11019/>

1958 թ. մարտի 10-ին Ներքին գործերի նախարար Իսրայել Բար Յահուդան հանդես եկավ նոր կարգադրությամբ, որը սահմանում էր. «Անձը, ով անկեղծորեն հայտարարում է, որ հրեա է, պետք է առանց որևէ այլ ապացույցի գրանցվի որպես հրեա»⁵:

«ՄԱՖԴԱԼ» ազգային-կրոնական կուսակցությունը չընդունեց այս մոտեցումը և անմիջապես դուրս եկավ կոալիցիայից:

Ըստ էության, սա «ով է համարվում հրեա» խնդրահարույց հարցի հետևանքով ծագած առաջին քաղաքական ճգնաժամն էր, որը, թեև հաղթահարվեց, այնուամենայնիվ բուռն քննարկումներ առաջացրեց հասարակության շրջանում, որոնք ցորս չեն դադարում:

Արդյունքում, Կառավարությունը ստիպված էր գնալ որոշակի զիջումների, և 1958 թ. հուլիսին վերոհիշյալ կարգադրությունը ենթարկվեց փոփոխությունների: «Անձը, ով անկեղծորեն հայտարարում է, որ հրեա է եւ այլ կրոն չի դավանում, գրանցվում է որպես հրեա»⁶:

Սակայն դա չփոխեց լարված իրադրությունը և Բեն-Գուրիոնը ստիպված էր ստեղծել նախարարներից կազմված հատուկ հանձնաժողով, որը կոչված էր «գնահատելու» Բար Յահուդայի կարգադրությունը: Հանձնաժողովների անդամների իրականացրած հարցումների արդյունքները ցույց տվեցին, որ հավատարմագրված մարդկանց մեծ մասը (45-ից 37-ը) Ներքին գործերի նախարարի գործողությունները «անբավարար» էին համարում: Որպես արդյունք, Դավիթ Բեն-Գուրիոնը չեղարկեց կարգադրությունը, իսկ Իսրայել Բար Յահուդան ազատվեց աշխատանքից:

⁵ Ruth Gavison, *The Law of Return at Sixty Years: History, Ideology, Justification*, p. 62

⁶ Նույն տեղում, էջ. 63

1959 թ. դեկտեմբերին Ներքին գործերի նոր նախարար նշանակվեց «ՄԱՖԴԱԼ» կուսակցության առաջնորդ Հայիմ Մոշե Շապիրան: Պաշտոնն ստանձնելուց անմիջապես հետո՝ 1960 թ. հունվարի 1-ին, նա հրապարակեց հրեաներին գրանցելու ընթացակարգային նոր կարգադրություն, ըստ որի որպես հրեա կարող էր գրանցվել.

ա) Նա, ով ծնվել է հրեա մորից

բ) Նա, ով ընդունել է հուդայականություն Հալակայի համաձայն⁷:

«Հրեա» տերմինի իրավական մեկնաբանման անհրաժեշտությունն առավել ընդգծվեց մեծ աղմուկ հանած երկու դատական գործերի ընթացքում, որոնք հերթական անգամ ցուցադրեց օրենքի թերի և անկատար լինելը:

Ռուֆայգենի (Հայր Դանիելի) գործը. 1962թ.

Լեհաստանում ծնված Օսվալդ Ռուֆայգենը պատանեկության տարիքից սկսած սիոնիստական շարժման ակտիվ մասնակիցներից էր: Երկրորդ Համաշխարհային պատերազմի սկզբին նրան հաջողվել է քանիցս փրկել հրեաների կյանքը Լեհաստանի օկուպացիայի ընթացքում: Այդուհանդերձ որոշ ժամանակ անց նա ինքը ստիպված է եղել թաքնվել կաթոլիկ վանքում և ժամանակի ընթացքում ինքնակամ քրիստոնեություն է ընդունել՝ դառնալով Կարմելականների վանական միության հոգևորական:

Իսրայել պետության հռչակումից և «Վերադարձի մասին» օրենքի ընդունումից շատ չանցած՝ 1962թ. Օսվալդ Ռուֆայգենը, որն արդեն կնքվել էր որպես Հայր Դանիել, դիմում է ներկայացնում Իսրայելի քաղաքացիություն ստանալու համար, սակայն մերժվում է,

⁷ David Turner, Israel, Zionism and the Diaspora “Who is a Jew” and the Conversion Problem <https://www.jpost.com/Blogs/The-Jewish-Problem---From-anti-Judaism-to-anti-Semitism/Israel-Zionism-and-the-Diaspora-Who-is-a-Jew-and-the-Conversion-Problem-365554>

քանի որ չէր համապատասխանում 1952թ. «Քաղաքացիության մասին» օրենքով սահմանված քաղաքացու չափանիշներին⁸:

Չնայած նրան, որ ո՛չ Կնեսետը, ո՛չ դատարանները որևէ հստակ սահմանում չէին տվել հրեա տերմինին, այդուհանդերձ գոյություն ունեւ Ներքին գործերի նախարարության վերոհիշյալ կարգադրությունը (01.01.1960), որը հստակ սահմանում էր, որ քաղաքացիություն ստանալու համար անձը չպետք է դավանի որևէ այլ կրոն, բացի հուդայականությունից:

Հայր Դանիելը դիմեց Իսրայելի Գերագույն դատարան (գործ թիվ 72/62 Օսվալդ Ռուֆայզենն ընդդէմ Ներքին գործերի նախարարի):

Իր բողոքում Հայր Դանիելը պահանջում էր ճանաչել Իսրայել հայրենադարձելու իր իրավունքը, նշելով, որ ինքը հրեա է, եթէ ոչ կրոնական պատկանելիությամբ, ապա՝ հրեա մորից ծնված լինելու հանգամանքով:

Փաստացի, դատավորների առջև դրվեց խնդիր որոշելու այն չափանիշները, որոնցով հնարավոր կլինէր սահմանել, թէ ով կարող է համարվել հրեա ըստ «Վերադարձի մասին» օրենքի: Գերագույն դատարանը վճռեց (4/1 հարաբերակցությամբ)՝ ելնելով «Վերադարձի մասին» օրենքի աշխարհիկ բնույթից «հրեա հասկացությունը պետք է մեկնաբանվի ավանդական, այլ ոչ թէ խիստ Հալակայական իմաստով և, հետեւաբար, «Վերադարձի մասին» օրենքը չի տարածվում ծնունդով հրեա, բայց կրոնափոխ եղած անձանց վրա⁹:

Վերոհիշյալ գործով Դատավոր Զիլբերգը հետևյալ կերպ արտահայտեց իր դիրքորոշումը. «Իմ կարծիքով, բարձրացված հարցի

⁸ Yabuda Savir, The Definition of a Jew under Israel's Law of Return, 17 Sw L.J. 123 (1963)

⁹ БАГАЦ 72/62 Освальд Руфайзен против Министра внутренних дел, <http://israel-law.com/russian/daniel.html>

պատասխանը պարզ է և հստակ: Հրեան, որը քրիստոնեություն է ընդունել, հրեա չէ»:¹⁰

Հատկանշական է, որ դատավորներից միայն Հայիմ Կոենն էր, որ գտնում էր, որ քաղաքացիություն պետք է շնորհվի ցանկացած մեկին, ով իրեն հրեա է համարում՝ անկախ իր դավանած կրոնից:

Իր վճռում Գերագույն Դատարանն այդպես էլ հստակ պատասխան չտվեց, թե ով կարող է համարվել հրեա, այլ միայն սահմանեց, որ այլ կրոն դավանող անձը չի կարող հրեա համարվել:

Բենիամին Շալիթի գործը. 1968թ.

1968 թ. իսրայելական ռազմածովային նավատորմի մայոր Բենիամին Շալիթը, որի կինը Շոտլանդիայի քաղաքացիություն ունեցող աթեիստ էր, դիմել էր բնակչության գրանցման վարչություն՝ Իսրայելում ծնված երեխաներին որպես հրեա գրանցելու համար¹¹: Իսրայելի Ներքին գործերի նախարարությունը, սակայն, հրաժարվեց կատարել Շալիթների պահանջը, նշելով, որ երեխաները չեն համապատասխանում Հալակայի չափանիշներին, այն է, հրեա պաշտոնապես կարող է համարվել միայն նա, ով ծնվել է հրեա մորից կամ դավանում է հուդայականություն ¹² : Երեխաները չէին համապատասխանում պահանջներից և ոչ մեկին:

¹⁰ Нелли Гуревич, Нееврей по постановлению БАГАЦа,

<https://pravo.israelinfo.co.il/articles/img/2532>

¹¹ Իսրայել պետությունում հրեա քաղաքացու նորմատիվ պարադիգմատիկ գրանցումը կատարվում էր հետևյալ կերպ՝

- քաղաքացիություն – Իսրայել
- ազգություն- հրեա
- կրոն – հուդայականություն,

Շալիթները պահանջում էին, որ իրենց երեխաները գրանցվեն քաղաքացիության բաժնում – Իսրայելցի, ազգության բաժնում – հրեա, իսկ կրոնի բաժինը բաց թողնվեր:

Uri Davis - Apartheid Israel: Possibilities for the Struggle Within, p. 96

¹² Time, 02.02.1970 Religion: Who is a Jew?

Շալիթի համար հարցը սկզբունքային բնույթ ուներ, քանի որ նա, լինելով նվիրյալ հայրենասեր, չէր կարող հանդուրժել, որ իր երեխաների գրանցման վկայականներում բացակայեր ազգության մասին նշումը, ուստի նա որոշեց դիմել է Իսրայելի Գերագույն դատարան (գործ 58/68)¹³:

Մոտ երկու տարի տևած քննարկումներից հետո, Իսրայելի Գերագույն դատարանը կայացրեց երկար սպասված վճիռը: Հերթական անգամ Դատարանը չտվեց հիմնական հարցի պատասխանը՝ արդյո՞ք հրեությունը կրոնի, ազգության, թե մշակույթի հարց է: Որոշումն առավելապես հիմնված էր տեխնիկական կողմի վրա, թե արդյո՞ք ազգությունը սահմանելիս կառավարությունը պետք է օգտագործի Հալակայի չափանիշները: Դատավորների մեծամասնությունը հայտարարեց, որ գրանցման մարմինն իրավասու չէ աշխարհիկ օրենքը մեկնաբանել ըստ Հալակայի և ի հակադրություն անհատի որոշման: Մինչդեռ դատավորների մյուս մասը գտնում էր, որ «ազգությամբ հրեա» տերմինի միակ մեկնաբանությունը կրոնական-հալակայական մեկնաբանությունն է: Հետևաբար, համապատասխան չափանիշը օբյեկտիվ-հալակայական սահմանումն է, այլ ոչ թե անհատի ինքնության սուբյեկտիվ սահմանումը՝ հիմնված մարդկանց խմբին կամ պետությանը պատկանելու զգացումի վրա¹⁴:

Դատարանը, 5/4 հարաբերակցությամբ, վճռեց բավարարել Շալիթի բողոքը: Այսպիսով Շալիթի երկու երեխաները գրանցվեցին քաղաքացիությամբ՝ Իսրայելցի, ազգությամբ՝ հրեա, իսկ կրոնական պատկանելիության բաժինը՝ դատարկ¹⁵:

¹³ HCJ 58/68 Shalit v. Minister of the Interior, Asher Felix Landau, Selected Judgments of the Supreme Court of Israel, Volume 5, p. 34

¹⁴ Ruth Gavison, The Law of Return at Sixty Years: History, Ideology, Justification, p. 66

¹⁵ Uri Davis - Apartheid Israel: Possibilities for the Struggle Within, p. 97

Վերոհիշյալ երկու դատական գործերն անհետևանք չմնացին և արդյունքում 1970 թ. մարտին «Վերադարձի մասին»¹⁶ օրենքում փոփոխություններ արվեցին: «...հրեա է համարվում հրեա մորից ծնված կամ հուդայականություն ընդունած անձը, որը չի դավանում որևէ այլ կրոն»:

Հարկ է նշել, որ օրենքում տրված հրեա տերմինի սահմանումը ոչ թե ունիվերսալ է, այլ իրավական ուժ ունի միայն «Վերադարձի մասին» օրենքի կիրառման շրջանակներում:

Օրենքի և նրա ձևակերպումների շուրջ քննարկումները մշտապես հայտնվում են Իսրայելի և Սփյուռքի հասարակական օրակարգում: Կնեսետը բազմիցս քննարկել է «Վերադարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու առաջարկները, որոնք էլ արդյունքում հանգեցրել են օրենքում մի քանի անգամ փոփոխություններ կատարելուն: Դրանք արտացոլում են տեղի ունեցած փոփոխություններն ինչպես Իսրայելի ներսում, այնպես էլ Իսրայել-Սփյուռք հարաբերություններում: Օրենքի ներկայից տարբերակը Իսրայելի օրենսդրական համակարգի՝ փոփոխվող հանգամանքներին հարմարվելու կարողության ամենավաղ արտահայտումն է:

ПРАВОВЫЕ АСПЕКТЫ ЗАКОНА О ВОЗВРАЩЕНИИ

Резюме

Лусине Мкртчян

lusinemkrtchyan92@gmail.com

Ключевые слова: *Холокост, закон о возвращении, Израиль, репатрианство*

Пережив Холокост, евреям в 1948 году наконец удалось создать Государство Израиль. Для содействия репатриации 5-ого июля 1950 года израильский Кнессет единогласно принял Закон о возвращении,

¹⁶ <http://www.jewishagency.org/first-steps/program/5131>

который провозглашал право каждого еврея репатриировать в Государство Израиль.

Однако, сразу после принятия, закон привёл к возникновению ряда юридических проблем, основной из которых являлась необходимость в юридической формулировке термина “еврей”. Вопрос состоял в том, должно ли определение “еврей” совпадать с галахическими критериями, следуя которым, евреем считался тот, кто рожден от матери-еврейки или принял иудаизм, или же евреем может считаться всякий, кто заявляет о своей принадлежности к еврейскому народу.

Необходимость юридического толкования термина “еврей” была более подчеркнута в ходе двух судебных процессов - Дело брата Даниэля и Дело Шалита. В результате вышеупомянутых двух прецедентов в марте 1970 года в законе о возвращении были внесены поправки, провозглашающие, что “евреем является любой рожденный от матери-еврейки, но не перешедший в другое вероисповедание, а также принявший иудаизм”

LEGAL ASPECTS OF THE LAW OF RETURN

Summary

Lusine Mkrtchyan

lusinemkrtchyan92@gmail.com

Keywords: *Hologost, Law of Return, Israel, repatriation*

Having survived the Holocaust, the Jews finally managed to create the State of Israel in 1948. To conduce repatriation, on July 5, 1950, the Israeli Knesset unanimously adopted the Law of Return, which gave every Jew the right to come and live in Israel and gain Israeli citizenship.

However, just after the adoption, the Law emerged number of legal problems, the main of which was the need for a legal formulation of the term “Jew”. The question was whether the definition of a “Jew” should coincide with halachic criteria, following which, the one who was born from a Jewish mother or accepted Judaism was considered to be a Jew, or anyone who claims to be Jewish can be considered a Jew.

The need for a legal interpretation of the term “Jew” was more emphasized in two trials - the Case of Brother Daniel and the Case of Shalit.

As a result of the aforementioned two precedents, in March 1970, the Law of Return was amended proclaiming that “ "Jew" means a person who was born of a Jewish mother or has become converted to Judaism and who is not a member of another religion" .